

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻՆ

Նորայր Բյուզանդացու հայագիտական անուրանալի վաստակի պատկանելի մասն են կազմում նրա նամակները, Հրապարակվող նամակները (պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, Ն. Բյուզանդացու արխիվում) Կ. Նզլանին ուղղված հայագետի նամականու մի մասն են միայն, Հրապարակվող նյութերն ունեն երկակի արժեք. նախ՝ իրենց արժարժած հայագիտական հարցադրում-լուծումներով դրանք այսօր էլ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և ապա՝ անփոխարինելի վավերագրեր են մեծանուն գիտնականի կյանքի ու աշխատասիրության մանրամասները լուսարանելու գործում:

Ա. Հ. ԱԴԱՄՅԱՆ

1

5 փետրվար, 1888

Վսեմական Տեռ
Կարապետ Եզյանց,

Երեկ ընկալա զՁեր հանձնարարյալ նամակն հունվար 10/30 թվականավ և զհանձնարարյալ ծրարն Ասողկան և կփութամ մատուցանել Ձեզ զիմ շնորհակալիս: «Ուղարկեցի նամակիս հետ լուսանկար պատկերս» կզրեք՝ չգտի զՁեր լուսանկարն ոչ ի նամակիդ և ոչ ի ծրարիդ՝ այս երկրորդ անգամն է, որ ի Ռուսաստանն լուսանկար կհղվի առ իս և ես չեմ ընդունիր: Հարցուցի ի Ստոքհոլմի թղթատունն, բայց տեղեկություն չունեին: Ըսեմ Ձեզ, որ ծրարիդ մի կողման թողթն բոլորովին հերձյալ էր, և նամակդ, թերևս կսխալիմ, բայց բացյալ և վերստին փակյալ թվեցավ ինձ:

Ջպատմություն Ասողկան վերի վերո ընթերցած էի ի Վենետիկ, և միայն քանի մի բառս քաղած՝ որ չեն գտնվիր ի Հայկազյան Բառարանին: Այս առաջին անգամ ընթերցա ծայր ի ծայր շնորհիվ Ձեր վսեմության, և կրկին ու կրկին անգամ պիտի կարդամ պարապով. և որովհետև պատված է զիս Մեծ. Տ. Ստ. Մալխասյան զիմ անունս հիշելով ի կարգի ծանոթությանց, արդ՝ համարձակություն կու տա ինձ հաղորդել Ձեր վսեմության զայն տեղեկությունս զորս ես նշանակած եմ իմ Բառարանի զանվանցն Չուկեն, Մախրարապի, Խազիկք, Կզեսուր, Աբդիշո, Ներեան, այլովքն հանդերձ: Ի մյուսում յոթնեկի պիտի հղեմ զտեղեկությունսդ առ Ձեզ, պիտի հղեմ նաև զՔենեսեքի Ա և Բ պրակս առ պատվական հրատարակչին Ասողկան Տ. Ստ. Մալխասյան, հանդերձ առանձին նամակավ, և զի չգիտեմ զյուր հասցեն՝ պիտի ուղղիմ առ Ձեր վսեմության, խնդրելով, որ բարեհաճիք հասուցանել առ նա:

Ինձ մասնավորապես հարգելի և սիրելի են այն համազգիք, որ նախնյաց Մատենադրությամբք կզբաղին, ժամանակ և դրամ կվատենն ձեռագիրներ խուզելով, ընդօրինակելով և հրատարակելով: Յաչս իմ մեծ և հույժ մեծ են

արդյունք Ձեր վսեմություն, Տ. Ք. Պատկանյանի և Տ. Ս. Մալխասյանի, երանի թե ի ձեր եռանդին մասն մի ունենալին նաև Կ. Պոլսո Հայք։ Որչափ ուրախ կըլլալի եթե ընդ Ձերով հովանավորությամբ կազմվեր փոքրիկ կաճառ մը ի Պետերբուրգ, նպատակ ունենալով հրատարակել զգործս մեր նախնի Մատենագրաց այնու ոճով՝ որով հրատարակել են Ասողիկ և Ղևոնդ։ Երբ պիտի ունենաք Մովսես Խորենացվո Պատմություն մի հայերեն և գաղղիերեն՝ ընդարձակ ծանոթությամբ և մեկնությամբ, երբ պիտի կարողանաք հասկանալ կատարելապես զգրություն Խորենացվոն, փոխանակ զի այժմ խաբեբա և ստախոս կոչելով զԽորենացի՝ կարծեն ոմանք թե յուրանց գիտությունը կհուշակեն (կակնարկեմ ի Տ. Մ. էմին և ի Տ. Ա. Մ. Գարազաշյան)։ Լավ է քննադատել զԽորենացի, բայց լավագույն է նախ հասկանալ զԽորենացի և ապա վճիռ արձակել։ Զիս ոչ մեծադիր տպագրություն Մխիթարյանց կհագեցնե և ոչ փոքրագիրն, որ հրատարակեցավ յամին 1881 անփութությամբ հրատարակել են և երկոքին, օրինակ տամ Ձեզ զԲաճկ Առաօտին, որ գրյալ է յԱշխարհագրութեան Խորենացւոյն (տպ. 1881), երես 41, և զԲաճկ Առավոտին և սխալ ընթերցվածն, որ գրյալ է ի փոքրագիր Պատմության Խորենացվոյն (տպ. 1881), երես 155։ (Հույժ գեղեցիկ է ստուգաբանություն Բաճկլի-Բամիկ բառից ի Տ. Ք. Պատկանյանի (Ասողիկ. երես 324), և ես իսկ այնպես նշանակած էի իմ բառարանի։

Խնդրեմ ի Ձեր վսեմութենե հրատարակել զԳր. Մագիստրոսի նամակս, զոր ընդօրինակած եք ի Մյունխեն. բազում հետաքրքրական տեղեկությունք կան ի նամակսդ, որոց սակավ ինչ քաղած եմ ես ի Վենետիկ։ Սերեոսի Հայ-բապետ բառն սաստիկ տագնապեցուցած էր զիս. գուշակած էի թե սխալ ընթերցված է, բայց չէի կրցած մակարերիլ թե Հրեապետ պիտի ըլլա, թեպետ ծանր էր ինձ Հայկազյանի կրճատ վկայություն յԱսողկանե «Հրեապետն ևս առնեի ամբաստանութիւնս»։ Ծնորհակալ եմ Ձեզ և Տ. Ս. Մալխասյանի, որ զիմ տարակուսանս փարատեցիք (Ասողիկ, երես 349—350)։ Այսու պատենիվ կծանուցանեմ Ձեզ թե վստահ եղեք, վսեմական Տեր, որ եթե խնամով ընտրություն ըլլուի այլ և այլ ընթերցվածոց ձեռագրաց Խորենացվոն, եթե ուշի ուշով քննվին հին պատմագիրք և հիշատակագիրք Հունաց և Հռովմայեցվոց, եթե մանր նշանակվին ամենայն աղբյուրք, որոց քաղած է Խորենացի, բոլորովին նոր պատմություն մի երևան պիտի ելնե և մեծավ մասամբ պիտի ցրին թե՛ օտարազգի և թե՛ մերազգի քննադատից խժբժանքներն։ Ոչ սակավ խառնակությունք կան ի բանս Սերեոսի և յետևյալաշունթությունե թերթից գրչագրաց, թող զբազմապատիկ աղավաղությունս ընթերցվածոց, երբ ավարտի Կորյունն, ետայնորիկ նոր օրինակ մի պիտի պատրաստեմ Սերեոսի։

Ի մոտո կհուսամ հղել Ձեզ 24 երես ի ձեռագրե Կորյան. ինչ որ պատշաճ դատիք այնմ կհամակերպիմ։

Մատուցանելով վսեմական Տեառնդ զիմ խորին մեծարանս, մնամ խոնարհ ծառա [Ն. Բյուզանդացի]։

Քննասերն ընդունելություն չգտավ ոչ ի Կ. Պոլիս, ոչ ի Տփղիս

Բղթ. № 235(Բ), վավ. № 245, փաստաթուղթ № 159

Վսեմական Տեր

Տեր Կարապետ եղյանց,

Հնկալա զՁեր պատվական նամակն 26 մարտ 17 ապրիլ թվականով։ Հույժ ուրախ եմ, որ Կորյունն և Ասողկան տեղեկությունքն արժանացեր են Ձեր հաճության։ Կորյունն թող մնա առ Ձեզ, զի ես ունիմ զօրինակն, իսկ զԱսողկան տեղեկությունս, եթե տերդ կփափագի, կրնա հրատարակել տալ ո՛ր լրագրի կամ հանդեսի մեջ որ ուզե։ միայն հաճեցեք ծանուցանել ինձ կանխավ, որպեսզի որիշ օրինակ մի հղեմ Ձեզ յուրք յուրք փոփոխությամբք և հավելվածովք։

Վսեմությունդ խորհուրդ կուտա ինձ երթալ կամ էջմիածին կամ ի Կարին՝ «Բանիվ և գրով» աշխատելույդ համար։ Այս քսան տարի է, որ կաշխատիմ հայերեն լեզվի և գրականության հմտանալու, և կարծեմ, որ եթե կրկին քսան տարի ևս ապրիմ, նույն ջանիվ և եռանդությամբ պիտի աշխատիմ։ Սակայն «բանիվ» աշխատությունն, այսինքն դպրոցաց մեջ դասախոսությունն, չէ ինձ ներելի, զի չեմ երկարողի և 15 վայրկյանի բարձրաձայն խոսիլն կհոգնեցնե զիս. փորձով գիտեմ, զի երկու տարի (1866—1868) դասախոսած եմ ի Վենետիկ ի Ռափայելյան վարժարանի և երկու տարի (1870—1872) ի Մխիթարյանց վարժարանին, որ ի Քաղքեդոն։ Կմնա «Գրով» աշխատությունն. երեք տարի (1880—1882) ի Կ. Պոլիս աշխատեցա, նախ Հայկական Բառաբանություն, և ապա Գաղղիերեն—Հայերեն բառարանով (մինչև ի 115-րդ թերթն). բայց այնպիսի նեղությամբ, այնպիսի նյութական բազմադիմի դժվարությամբք և տառապանք, որ բնավ փափագ չունիմ վերստին ի Կ. Պոլիս հաստատվելու, թող զի հասարակաց Մատենադարանաց չգոյությունն՝ դժվարություն դժվարության վերա կհարուցանե։ Կ. Պոլիս բնակող գրագետն Ռոշիլտի հարստությունն պետք է ունենա զյուր մատենադարան կազմելու համար, և այն հարստությամբ անգամ չի հաջողիր վասն զի թուրքին հիմար գրաքննություն կգրավի ի մաքսատան զայն ամեն մատյանս՝ յորս Մահմետ չներկայացվիր իբրև ճշմարիտ մարգարե և պատգամավոր Աստուծո։

Հին փափագ մ'ե սրտիս՝ էջմիածնի Մատենադարանի ուսումնասիրությունն, եթե կարելի է, որ իբր պաշտոն հանձնվի ինձ (վարձատրությամբ) Մատենադարանիդ վերակացությունն, երջանիկ կհամարիմ զիս, և կհուսամ, որ օգտակար կըլլամ իմ Ազգիս՝ առավել քան զոր այժմ ի Ստոբհոլմ։ Սակայն—ահա միակ դժվարությունն—ազատ չեմ, գոնե առ այժմ. իմ կինս Ստոբհոլմից է, և ունի զյուր մայրն 70-ամյա՝ որմե բաժանվիլ չուզեր և ոչ յինեն կուզե բաժնվիլ, նույնպես և ես ի նմանե. թող զայս տակավին 4½ տարվո դաշնադրություն ունի յուր Արվեստանոցին վարձակալության, որ պիտի լրանա ի 30 սեպտեմբերի 1892 տարվոյն. մինչև ցարդ թվական պարտավոր եմ մնալ ի Ստոբհոլմ։ Եթե այն քաջալերությունք և ձեռնադրությունք, որոց կակրնկալեի, տրվեին ինձ առատությամբ ի Հայոց Կ. Պոլիսի, և հաջողեի ապրիլ ի քաղաքիդ՝ ոչ իբր անտուն թափառական և ամսական 5 ոսկով—8 ոսկով նօթի և ծարավի, այն ժամ կհավանիցնեի և զիմ կինս, որ ի լրանալ յուր առաջին դաշնադրությունն ամին 1887 հաստատվեր ընդ իս ի Կ. Պոլիս։

Ավասիկ, վսեմական Տեր, իմ արդի կացությունս։ Ես այժմ կպարապիմ Կորյամբ, ետ այնորիկ պիտի պատրաստիմ հետզհետե զնախնիք, զԵզնիկ

Կողբացի, ՂԱգաթանդեղոս, ՂՓավստոս Բյուղանգ, ՂՄ. Խորենացի, ՂՍերենոս, ՂԳաղղիներեն—Հայերեն բառարան (ընդարձակագույն), ՂՀայերեն—Գաղղիներեն բառարան և ՂԲառարան ստորին Հայերենի: Մնացյալն հանձնե ի նախախնամութիւն: Ի 18 ամառուս հղեցի Ղիմ Գաղղիներեն—Հայերեն բառարանն, կխնդրեմ, որ հաճիք ընդունել զայն իբր նվեր:

Հուլիս շնորհակալ եմ, որ կհոժարիք հայթհայթել ինձ հայերեն և օտար լեզվով մատյաններ՝ որոց կրնամ պետք ունենալ Կորյան Պատմութեան համար: Ի Հայկական Հին Դպրոցի (Ս. Ղազար, 1886) երես 758 նշանակել է թե ի 133-րդ Ձեռագրի վանաց էջմիածնի կա ժողովրդեան պատմագրարար ասացեալ Տեր Կարապետ Եպիսկոպոսի Սասանացոյ յաղագս վարուց և մահվան Սրբոյ վարդապետին Մեսրոպայ: Կխնդրեմ ի վսեմութենեդ հանել տալ զօրինակն Ներբողենիդ և հղել առ իս. անշուշտ նոր տեղեկութիւնք կգտնվին: Նույնպես եթե էջմիածին կամ ի Մոսկվա կամ ալլուր կգտնվի Կորյան Պատմութիւնն, կխնդրեմ ի վսեմութենեդ գաղափարել տալ ինձ համար, որով կմնամ Ձեզ Երախտապարտ մեծապես:

Արեւելագիտաց ժողովուրդն այս տարի ի Ստոքհոլմ, գումարվելուն խոսք կար հերու, բայց չեմ կարծեր, որ գումարվի, ալլև ալլ անձինք, որոց դիմեցի, տեղեկութիւն չունին, պետք է անձամբ ներկայանամ առ Արտաքին գործոց պաշտոնյան, որ միայն կարող է հաստատապես պատասխանել, և եթե պիտի գումարվի այս տարի ի Ստոքհոլմ, կժանուցանեմ Ձեր վսեմութեան մասնավոր գրով:

Եթե վսեմութիւնդ այս տարի ամառնային օգափոփոխութեան դիտավորութիւն ունի շատ և շատ կուրախանայի եթե ի Ստոքհոլմ անցնեիք շոգենավով երկու օրե ի Պետերբուրգե ի Ստոքհոլմ, Helsingors-ի ճանապարհով (երեք օր A'lo ի ճանապարհով):

Մատուցանելով զիմ խորին մեծարանս վսեմական տեառնդ:

Մնամ խոնարհ ծառա [Ն. Բյուզանդացի]

(գրեցի ի բառաւանդս.)

Առ վսեմական Տեր

Տեր Կարապետ Եզյանց

Նվիրե խորին հարգանքով

Նորայր Ն. Բյուզանդացի

Ստոքհոլմ, 17 ապրիլ, 1888:

Թղթ. № 235 (Բ), վավ. № 245, փաստաթուղթ № 190

3

5 հուլիս, 1888

Վսեմական Տեր Կ. Եզյանց,

Ընկալա զՁեր թուղթսն մայիսի 11 (հ. տ.) և հունիսի 15 (հ. տ.) թվականով: Հուլիս շնորհակալ եմ Կարապետ Սասանացոյն ներբողենին համար, զոր բահահանեցաք օրինակել տալ յիմ պետս և կխնդրեմ, որ զիմ շնորհակալութիւնս մատուցանեք նաև վսեմութեանդ պատվական թղթակցին էջմիածին: ԶԿարապետ Սասանացի ալլուստ չեմ ճանաչեր, բայց յուր գրութենեն հայտնի է, որ թարթափած է գիրս Դավիթ Անհաղթի, Փիլոնի և Գրիգորի նազիանզացոյ: Ունի լավ իմաստներ, կսիրե նոր բառեր բարդել, յորոց ոմանք պիտանի են՝ բայց աքուրբենական դրվագն բոլորովին սղայական գործ է: Զգիտեմ թե յուր պերճ

բառերուն բով ինչպես մուտ տված է նաև Նաբիֆ և Չավուշ ալլազգի բառերու և Զինախաբ ու Պատ (այսինքն Որմ, գղ. սոսկ ռամկական բառերուն («Անդ ուր կոչնատեր և Հաբիֆ և Հայրն համայնից».— «Ով ձայն բանին և շավուշ արքային»):

Զգյուտ հայերեն նշանադրաց ի ձեռն երանելույն Մաշտոցի, դնե ի Պալունյաց դղեկին, համաձայն Վարդան Պատմիչի՝ որ ասե Բալու: ԶՄաշտոցե ասե թե հմուտ էր «լատինական մատենին» արքունի դիվանին Հայոց այս բուրորովին անլուր բան է: Յուր գյուտի վրայն կճանապարհորդեցնե զՍահակ և զՄեսրոպ յիննական վանս Տարօնո, ուր կային «թվով հինգ հարյուր միակամ եղբայր» Սահակ և Մեսրոպ կմեկնին անտի և վաղիվն և կպատահին Վոսմաշապո՝ «ղի գայր ի Միջագետաց» և երեքն ի միասին կերթան ի մեծ անապատն, որ ետ սեպհական թագավորացն Արշակունեաց, հինգ հնգիցըն (?) հասուցեալ ի Տրտատայ քաջէ: Եթե էջմիածնի Մատենադարանի տեսչութիւնն ընդդիմութիւն չունի, զայս ամենայն կհավելում իմ ծանոթութիւնս Կորյան՝ ի գիտութիւն և ի քննութիւն բանասիրաց: Փափագելի էր, որ գտնվեր և այլ օրինակ ներբողինիս, զի կան ոչ սակավ երկբայական բանք:

Այժմ կաղաչեմ զվսեմութեանդ, որ շնորհ ընե տեղեկանալ էջմիածնե.

ա) Ո՞ր գարու գրութիւն է այն Զեռագիրն՝ որում կգտնվի Կարապետ Սասնացիո ներբողանս: «Մետասաներորդ գարու գրչագիր (ի թվին ՇԻԵ)» կանվանի Հայկական Հին յաբութիւն, երես 758, բայց ԺԱ գարու գրչագրի մեջ ինչպե՞ս կրնա գրել Հովհաննես Արքանդեայր, որ ի ԺԳ գարու ապրած է, թե «Ես ձեռամբ իմով գրեցի»:

բ. Հովհաննես Արքանդեոր հիշատակարանն անմիջապես յավարտ Կարապետ Սասնացիո ներբողինին գրված է թե ոչ:

գ. Մի՞ հմուտ գրչի գործ է ամբողջ Զեռագիրն թե զանազան գրչաց:

դ. Որչա՞փ նյութք կան ի Զեռագրիդ և ի՞նչ է յուրաքանչյուրին վերնագիրքն:

ե. Բաց ի Հովհաննես Արքանդեոր հիշատակարանն կա՞ն և այլ հիշատակարանք:

Մի ամսե ի վեր անհանգիստ եմ, Ստոքհոլմի տարօրինակ կլիմային պատճառով, զրավոր աշխատութիւնքս մնացին ուր որ էին: Պիտի գրեմ զՏեղեկութիւնսն յԱսողիկ ի նոր օրինակի, զի բավական փոփոխեցի, և պիտի հղեմ վսեմութեանդ, յետ այնորիկ պիտի դառնամ ի Կորյուն որո Պատմութեան 200 ծանոթութիւնս գրած եմ ցարդ, և տակավին կա գրելի բաղում ինչ:

Արեւելագիտաց ժողովն պիտի գումարվի ի Ստոքհոլմ 1889-ի աշնան:

Կրկնելով գիմ շնորհակալութիւնս առ վսեմական Տերդ, մնամ խորին մեծաբանոք

Խոնարհ ծառա

Պատմութիւնն Հովհաննես վարդապետի Տարոնեցիո (որ մականվամբ Կոզեռն կոչված ի ԺԲ գարու), ցարդ անտիպ մնացած է: Կիսնդրեմ ի վսեմութենեդ հորդորել զմեծ միաբանութիւնն էջմիածնի, որ հրատարակե զայդ Պատմութիւնն:

Կորյան Պատմութեան 5 օրինակք կգտնվի ի Մատենադարանի Ս. Ղազարու. ա և բ օրինակքն առաջնորդ եղած են 1833-ի տպագրին:

գ օրինական (որ չէ հարազատ Կորյան, այլ ի ԺԱ կամ ի ԺԲ դարու խմբագրյալ է ի ձեռուն անծանոթի ուրուք ի Պատմության Կորյան և ի Պատմության Մ. Խորենացի) տպագրյալ է ի շարս հայկական Սոփերաց, հատոր ԺԱ. 1854:

դ օրինական ըստ մասնե ծանոթ է ինձ ի վկայությանց նոր Հայկազյան Բառարանին:

ե օրինական բոլորովին անծանոթ է ինձ:

Զգիտեմ թե վսմեկան Տերդ ունի՝ բարեկամական հարաբերություն ընդ Մխիթարյանս Վենետիկո թե ոչ: Որ և իցէ պարագայի մեջ կխնդրեմ որ վսեմությունդ չդիմե առ Ս. Ղազարու Միաբանությանն՝ Կորյան Պատմության դ և ե օրինակաց պատճենն ուղելու համար: 1876 տարվո հոկտեմբեր ամսոյն մեջ երբ գնացի ի Վենետիկ՝ Ս. Ղազարու քանի մի ձեռագիրները ուսումնասիրելու դիտավորությամբ, առո՞ք փառո՞ք վնճավեցա: Թող Վենետիկո Մխիթարյանք ամրափակ պահեն զյուրանց Զեռագիրներն, ես ոչինչ կխնդրեմ և ոչինչ կընդունիմ ի նոցանե:

Թղթ. № 235 (Ր), վավ. № 246, փաստաթուղթ № 21

4

30 հոկտեմբեր, 1889

Վսեմական Տեր Կ. Եզյանց,

Ընկալա զՁեր նամակն ամսույս 9/21 թվականավ, և ուրախացա լսելով որ ողջ առողջ դարձեր եք ի Պետերբուրգ, փափագելի էր ինձ երկարագույն վայելել զՁեր տեսությունն ի Ստոքհոլմ, խոսել պարապով, հաղորդել զիմ ամենայն խորհուրդս: Մնաց այլում տեղո և ժամանակի:

Տարիներն կանցնին, երիտասարդությունս վաղ անցավ, հիսնամյակս կմտնեմ, և ես տակավին ոչ ինչ գործ ի գլուխ հանած եմ: Ունիմ շատ իղձեր, բայց դյուրություն և միջոց և ոչ մի: Կուզեմ նոր հիմ գնել մեր ազգային պատմության և գրականության շինուածույն, նոր ճանապարհ բանալ հայերեն ուսմանց հետազոտության: Փորձեցի զարթուցանել զեռանգ Մխիթարյանց Վենետիկո փոխարեն ընկալա արհամարհանս, դոքա (բացի Հ. Ալիշանե) Շեքսպիր և Դանտե կուսումնասիրեն, և ոչ զյուրանց նախնիս, և երբ նախնյաց վերա խոսել կփորձեն: Հայկական Հին դպրության Պատմություն կհրատարակեն լի անհեթեթ սխալներով: Փորձեցի զազգայինս Կ. Պոլսի, բայց դոքա թեթև վիպասանությանց սիրողք են: Հույս ունեի ի Վիննայի Մխիթարյանց, բայց Հանդեսն ավելի կարևորություն կու տա վիպասանությանց, բանաստեղծությանց, վաճառականության, Փ. Բյուզանդայ և Ագաթանգեղի վերա հոգվածներ հրատարակեցան, առանց ամենափոքր ուշադրություն նվիրելո իմ կարծյաց, որ ավելի ուսումնական են (կհամարձակիմ ասել) քան զկարծիս հանգուցյալ Գաթրճյանի: Ի՞նչ ըսեմ հայ վանորեից համար, և անվանե Ծրուսաղեմի և Էջմիածնի միաբանությանց. Ծրուսաղեմ խոր քնով կքնանա, Էջմիածին բարվո փափագող է. իցի՛վ արդյունավորին յուր փափագներն, իցի՛վ գիտնական աշխարհին առջև հարգ և պատիվ ստանա և ծանոթանա այն գանձերուն, որ ի բազում գարուց ամբարյալ են ի մենաստանիդ:

Ձեր վսեմության կմատուցանեմ այժմ շատ մի խնդրոց.

ա. Կխնդրեմ զԶեռագիրն Ասողկան, զորմե արդեն խոսած եմ:

բ. Կխնդրեմ, որ փոխ տաք ինձ, եթե ունիք զՄ. Կաղանկատվացի (տպ. էմին) և զՄխ. Այրիվանեցի (տպ. Պատկանյան): Յետ համեմատելո կվերադարձնեմ Ձեզ:

զ. Ձհատվածն Շապհոյ Բագրատունվո զոր ունիք ի ձեռին: (փոխ.)

դ. Զօրինակն թղթոց Մագիստրոսի՝ զոր հանած եք ի Ձեռագրեն Մյուն-խընի: (փոխ.)

ե. Երախտագիտությամբ կրնդունիմ, եթե հաջողեցաք ստանալ զ Histoire de Basrwpire et Saint Martis և զերկու գաղղիներեն հատորսն (որոց երկ-որորն է Դարտել և Հեթում պատմիչ):

Դարտելի սրբագրությունն բավական աշխատանք տվավ ինձ. Տ. Խորեն ոչ միայն տկար է ի հայերենի, այլև ի գաղղիներենի. ի բազում տեղիս չէ հասկացած զբնադիրն: Քննեցի մինչև ի 135 երես թարգմանությունն կմնա 17 երեսը: Պիտի ջանամ հղել առ Ձեզ ի մեջ կույս նոյեմբերի: Պիտի հղեմ Ձեզ և զշվետական թարգմանություն Սիմեոնի Մետափրաստեա վարուց Ս. Լուսավորչի:

Կինս ուրախությամբ ընդունեցավ զողջույնս վսեմությանդ և փոխարեն կմատուցանե զյուր մեծարանս: Պիտի հղեմ Ձեզ ի մոտո զլուսանկարդ, որ վաղուց հանեալ են, ուզեց յուր ձեռամբ հղկել հարդարել, վասն այնօրիկ փոքր ինչ հապաղեցավ:

Ուրախ եմ հույժ որ վսեմությունդ բանախոսությունն արժանավոր ընդունելություն գտեր է ի Քրիստիանիա: Ես չունիմ զմատյանն Bugge-ի, եթե գայ ի Ստոքհոլմ, պիտի փութամ ծանոթությունս իրեն ոչ ոք ի Շվետ կարևորություն կուտա Հայերենի: Ուրիշ առթիվ տեսնված եմ Hildebrand-ի հետ, բայց ցրտությամբ ընդունած է զիս. կգրեմ նախ իրեն, և եթե հաջող պատասխան տա անձամբ կներկայանամ:

Եթե իմ տեղեկությունքն յԱսողիկ պիտի շահատարակեն ի Մոսկվայի հանդեսին, կխնդրեմ ի Ձենք հանձնել խմբագրին, որ առ իս վերադարձնե զիմ ձեռագիր. ետ ինչ փոփոխությանց և հավելվածոց, կհղեմ առ Արձագանգ, եթե հաճո է Ձեզ: Տակավին չընկալա գիր ի Տ. Հովհաննիսյանե, թեպետ ես գրած եմ առ նա ի 13 սեպտեմբերի:

Ի Ձեռագրին, զոր հուսամ ընդունել ի Ձենք, կա և Լաստիվերտեցվո Պատմությունն, ինչպես գիտեք: Կնշանակեմ ի ստորև զիմ ուղղությունս Վենետիկո տպագրին, հանելով ի Նախնիք մատենիս. հետաքրքիր եմ բաղդատել ընդ ընթերցվածս Ձեռագրիդ:

1. Սարգիս և Տիրան անուն. երես 6 (Տիրանուն.)
2. վասն դմեաբարուց. երես 11 (դժնյա բարուց.)
3. յայնքան բազմութեան. երես 14. (բազմութենե.)
4. ի բաժանէն Կյուրապաղատէն. երես 16. (Կիւրապաղատին.)
5. առաքել առ նմա դեսպանու. երես 16. (նա.)
6. գգլուխ սպանելոցն ի մի վայր հավաքել. երես 17. (զգլուխս.)
7. առ մի մի բերողացն. երես 17. (ի բերողացն.)
8. Իսկ ի գալ երկրորդ ամին. երես 21 (երրորդ.)
9. Գնիկիտամ ներքինի. երես 22. (զնիկիտ ոմն ներքինի.)
10. Իսկ ի մտանել երրորդ ամին. երես 22. (չորրորդ.)
11. պատասխանի տվեալ թագավոր ասե, երես 23. (թագավորին.)
12. ապստամբեաց ռդին մանեակ, երես 32. (Գորգին.)
13. լցեալ փշով, երես 36. (փռշովով.)
14. որդի քո որդվոց յուրեանց. երես 37. (յուրոց.)

15. զԳաղի ասեալ ձեռինս, երես 38. (հարյալ.)
16. ի տեսութիւն և ի զարմանս ցուցանեւ, 39. (կացուցանեւ.)
17. առ բարի նախանձ քանեալ, 39. (քակյալ.)
18. զմիտքե սկսեալ. 45. (ի միտքէ.)
19. ոչ գոյր ի հիշատակ մեզ, 46. (գայր.)
20. ի քեզ կարելոց, 52. (կտրելոյ.)
21. կաշառուցն ներողք, 53. (կաշառուց աններողք.)
22. օգնողք թագավոր ազգաց. 53. (առգնողք, որ վրիպակալ ընթերցել են ավզնողք օգնողք.)
23. Սեբարացիք. 53. (Սեբստացիք.)
24. չգոյր ի հիշատակ նոցա, 54. (չգայր.)
25. զստորինսն Ը երկիր զԲաղաշիւն. 55. (զստորոտսն... զքարաշիւն.)
26. սուր առն ի վերա եղել, 56. (ի վերա առն.)
27. միոյ միոյ բանից. 58. (մի.)
28. և ոչ զեղուն դինով. 63. (և ոչ զեղուն զուրք գինով.)
29. ի հորդորութեան գնացիցն. 64. (հորդոր-ե.)
30. առ շտապ ի նոցանե, 65. (ապշտապ.)
31. զոր Ավանն կոչեին, 73. (Առանն.)
32. զգլուխ ելլալ իրս. 74. (զ ի գլուխ.)
33. Զորք աթոռք... ունեւ. 75. (Զորք աթոռո.)
34. թագավորութիւն Թեոդոսին, 78. (Թեոդոսին.)
35. օգնողք սորա՝ թագավորք, 91. (ավզնողք.)
36. ի հղիութեան կենաց. 91 (գինույ.)
37. Զամուկ կանանցս. 102. (շատուկ.)
38. (թերի թվի ի 110 երեսին.)

Զանց կենմ նշանակել զտպագրութեան և զկետադրութեան վրիպակս, և ընտրութիւնս ընթերցվածոց, որ նշանակել են ստորին երեսաց տպագրին. օրինակ իմ երես 12 ուղղելի է տպագրին ըստ ծանոթութեանն, «վասն զի որդին նորա Երկար վաղ վախճանեցաւ: Հովհաննես Սմբատ թագավորն ունեւ ուրեմն Երկար անվամբ որդի մի՝ որ ի մանուկ տիս վախճանյալ է. Զամլյան չէ անդրադարձած զայս (տես Պատմ. Հայոց, Բ, 919 էջ):

Կիսնդրեմ ի վսեմութենեզ նաև զգաղղիերեն թարգմանութիւն Լաստի-վերտեցվո ի Prud'homme te, և զԿիրակոս Գանձակեցի (տպ. Ոսկանի):

Մատուցանելով վսեմական Տեառնդ զիմ մեծարանաց ողջունս, մնամ խոնարհարար

Ն. Ն. Ի.

Թղթ. № 235 (Բ), վավ. № 246, փաստաթուղթ № 126

5

21 օգոստոս, 1890

Վսեմական Տեւ Կ. Եգյանց,

Ամսոյս 16-ին դարձա ի Ստոբոնով իմ ուղեորութիւնն ի Կ. Պոլիս, և յետ առի Արքունի Մատենադարանի քաղաքիս զԶեռագիրն Աբրահամ երիցու՝ զոր ի պահ թողած էի անդեն: Մինչև ցարդ համեմատած եմ 7 մատենագրութիւնս, որ են Եվսեբեայ եկեղեցական, Թ. Մեծօփեցվո Պատմութիւն, Ղեվոնդ երեցու Պատմութիւն, Ա. Լաստիվերտեցվո Պատմութիւն, Կիրակոսի Պատմութիւն, Վարդանա Պատմութիւն, Մ. Խորենացվո Պատմութիւն: Ազաթանդեղոսի հա-

մեծատնությունն, որով զբաղյալ եմ այժմ, հուսամ կավարտի առաջիկա յոթնեկի: Զենորա Ասորվո Պատմությունն բավական կտարբերի ի տույադրենն ս. Ղազարու, վասն որոն ամբողջ պիտի ընդօրինակիմ զայն: Նույնպես ընդօրինակիլ կփափագիմ զԴաշանց թուղթն, զՊատմություն շացիվնյաց խաչին, զՍոկրատայ եկեղեցականն: Իսկ Միխայել Ասորվո ժամանակագրության թարգմանությունն օտար է ի հրատարակելուն Երուսաղեմ յամի 1871, կերևի թե է նույն ընդ այնմ զոր Երուսաղեմացիք կկոչեն «Սովորական օրինակ» և կըսեն թե «ամոք ինչ առաջագոյն տպագրեցավ ի ս. Աթոռս» (Առաջաբան 1871ի տպագրին, երես Բ, ծան. 1): Կնտրեցի ի Կ. Պոլիս զայգ տպագրություն, այլ, կցավիմ որ չկարողացա գտանիլ:

(Հուլիս 14—օգոստոս 5):

23 օր մնացի ի Կ. Պոլիս Գաղղիներեն—Հայերեն Բառարանին մնացյալ 1250 օրինակաց վաճառման գործն չհաջողեցավ, գեթ առ այժմ, հուսացուցին զիս, որ 2—3 ամսե թերևս հաջողի: Մեր ազգայնոց վատթար վիճակն մեծ տրտմություն պատճառեց ինձ. վհատություն, հուսահատություն նկարյալ տեսի երեսս ամենեցուն՝ որոց հետ տեսնվեցա: Հուլիս 15/27ի երեք հայոց սպանությունն ի Գումդափուն՝ միջաբեկ ըրավ զայնոսիկ որոց զգացմունք տակավին կենդանի են դարավոր գերության և թշվառության հակառակ:

Ունեի կարևոր քննելիս Ազգային Մատենադարանի Գալատայի, ի Մատենադարանի Անտոնյան Հայոց Օրթաքեո և ի թանգարանի վերծանության, ավագ, որ չունեցա պարապո ժամանակ:

Ամերիկացի բողոքական քարոզիչը ձեռնարկած են հրատարակել ի Կ. Պոլիս զհայերեն Աստվածաշունչն, նշանակելով ի ծանոթությունս զտարբերությունս եբրայական և ի հունական բնագրաց: Այս հրատարակության վերակացու կարգյալ է Տ. Ավետիք Կոստանդյան (բողոքական երեց), որ քաջ եբրայագետ երեցավ ինձ, և իրեն կաշակցին Տ. Ա. Մ. Գարագաշյան (Քննական Հայոց Պատմության հեղինակն) և Տ. Հովհաննես Հյունքյարպեյենտյան քահանան: Նախ զնոր կտակարանն պիտի հրապարակեն, և ապա զՀինն: Տեսա զՄաթեոսի, Մարկոսի և Ղուկասու տպագրյալ թերթերն, պատվական գործ է: Ապրիլն. Ամերիկացի բողոքականք, որ հայերեն մատենագրության այսպիսի կարևոր և օգտակար ծառայություն մատուցանելու համար չեն խնայիր ոսկվո: Չունին իրենք հայերեն Աստվածաշունչի և ոչ մի Ձեռագիր. այդ Ձեռագիրք պահված են, վսեմությունդ լավ գիտե թե ո՞ր. և Ձեռագրացդ տյարք ո՞րչափ կօգտին և կօգտիցեն զնա բանասերս յուրյանց ամբարանոցս մթերյալ գանձերեն: Վսեմությունդ զայն ևս քաջ գիտե: Ամոթ, ամոթ մեր վանականաց:

Այլևայլ անձինք խնդրեցին յինն զտեղեկությունսն Ասողիկ, եթե վսեմությունդ կարե հղիլ ինձ այլևս քանի մի օրինակս, մեծավ շնորհակալությամբ կընդունիմ:

Ի սրտե մաղթելով քաջառողջություն վսեմական տեառնդ, մնամ խորին հարգանաց ողջունիվ

Ձերդ [Ն. Բյուզանդացի]:

Թղթ. № 235 (Բ), վավ. № 246, Կապտաթուղթ № 87

Հուլիս ազնիվ և սիրելի բարեկամ

Վսեմական Տեղ Կ. Եղյանց,

Ընկալա զՁեր նամակն օգոստոս 24-ի (հ. տ.) թվականավ և զգիրս օրինակ տեղեկությանցն յԱսողիկ։ Ընկալա նույնպես զնոյեմբեր 14-ի նամակդ և երկուս օրինակս Դարդելի ժամանակագրության, և կմատուցանեմ Ձեզ զիմ ջերմ շնորհակալիս։

Ուրախ եմ, որ կվայելեմ զանգին բարեկամություն վսեմությանդ, որո արդյունք են Դարդելի առաջաբանին մեջ Ձեր ազնիվ խոսքերն զիմ նվաստությունես։ Բերկրությամբ տեսա, որ ընդունած եք գրեթե զիմ բոլոր ուղղությունս և դիտողությունս։ Հարկավ վսեմությունդ չկարեր այլ ազգ հիշել զիմ աշխատություն և վշտացնել զՏեղ խորեն, բայց այն նամակն՝ զոր գրեցի Ձեզ տարվույս փետրվարի 8-ին, կմնա առ Ձեզ, և ես զոհ եմ այսչափով։ Եթե Տեղ խորեն պահած է զօրինակ յուր թարգմանության, կրնար բաղդատել տպագրելուն հետ, և մոռացած չէ անշուշտ զյուր արհամարհական խոսքն՝ թե «նորայրի բառարանին հայերենն ընտիր չէ», ինչպես վճռած է ի լուսանկարչական Ապտուլահյան եղբայրց, և զոր հաղորդեց ինձ բարեկամ ոմն յուր 1883 սեպտեմբեր 8-ի նամակով։

Եթե վսեմությունդ կներե ինձ, որ տակավին քանի մի ամիս Աբրահամ Երեցու ձեռագիրն մնա առ իս, հուլիս հուլիս շնորհակալ կըլլամ։ Բյուզանդ, Եվսեբիոս, Ագաթանգեղոս շատ աշխատացուցին զիս։ Կիսիսգիրմ ամբողջապես ընդօրինակել զՊատմություն սրբույն ներսեսի, զՋենոբ, զՅոհան Մամիկոնյան և զՍոկրատ։ Ամենօրյա զբաղանքս ձեռագրին ուսումնասիրությունն է։

Կիսիսգիրմ, որ Կորյան պատմության սկզբնավորությունն, զոր հղած եմ առ Ձեզ, մնա Ձեր քով։ Տ. Կ. Կոստանյան անկատար գաղափար կրնա առնուլ զիմ աշխատությունն։ Բավական փոփոխություններ մուծած եմ նույնիսկ ի սկզբնավորության թե բնագրին Կորյան, և թե ծանոթությանց։ Կհուսամ, որ օր մի կհաջողիմ միանգամայն հրատարակել զԵզնիկ և զԿորյուն, զԵզնիկ՝ իբր ներկայացուցիչ Առաջին թարգմանությանց երիցագույն դասուն, զԿորյուն՝ իբր ներկայացուցիչ կրթսերագույն դասուն։ Առաջին թարգմանչաց իբր ինքնագիր հայերեն մատենագրություն ունինք միայն զմատենիկն Ընդդեմ Աղաճ-դաճ և զՄաշտոց վարդապետի Պատմությունը, այս երկու փոքրիկ գրվածք մեծ նշանակություն ունին հինգերորդ գարու գրականության համար, և կբաղձամ կատարյալ կերպով ներկայացնել թե յորում է Եզնիկ և Կորյան շարադրությանց տարբերությունն, հետևաբար մեկ կողմեն՝ թարգմանությանց, որ Եզնիկ կարգին կպատկանին, մյուս կողմեն՝ թարգմանությանց, որ Կորյան կարգին կպատկանին (Ագաթանգեղոս, Բյուզանդ, Մակարայեցվոց գիրք, այլովքն հանդերձ)։

Գեղեցիկ է Ձեր խորհուրդն հայերեն գիրս հրատարակելս ի Ստոքհոլմ։ Վաղուց ըմբռնած էի և ես, որ մեր հին մատենագրությունք անթերի և անփոփոխ չկտրեն հրատարակել ոչ միայն ի Թուրքիա, այլև նույն իսկ ի Ռուսաստան։ Բայց ես առևտրական գործունեությանց բնավ չեմ հասկանար, Վսեմական Տեղ, եթե ա՛յլ ոմն հաստատե տպարան ի Ստոքհոլմ, որ դուրավ կրնա հաջողիլ փորձառու մարդո, ես կրնամ ստանձնել զգործ տպագրությանն։

Կիսնդրեմ ի Վսեմութենեդ հղել ինձ օրինակ մի չ. Ալիշանի Այրաբառ մատենեն, զոր անչափ շնորհակալությամբ պիտի ընդունիմ: Կիսնդրեմ նույնպես որ բարեհաճիք փոխ տալ ինձ գէմինյան Մ. Կաղանկատվացի և զՊատկանյան Մխիթար Այրիվանեցի, յետ բաղդատելո կվերադարձնեմ առ Ձեզ: Կհամարձակիմ խնդրել նաև օրինակ մի ի Տեր Գ. Խալաթյանի քննադատությունեն Խորեն վարդապետի աշխարհաբար Մ. Խորենացվոն: Վսեմությունդ կճանաչեանշուշտ ի համբավո զհայասեր և զհայագետ իտալացին էմիլ Տեզա, ուսուցչապետ ի Համալսարանին Պատանիոնի, հղեցի Ձեզ այսօր հանձնաբարձալ զյուր տետրակն, յորում բարեհաճած է խոսել նաև զիմ գրավոր վաստակոց:

Հայտնելով վսեմությանդ զիմ ջերմ խնդրակցություն ողջմամբ երթողարձիդ էջմիածնե, և կրկնելով զիմ խորհին շնորհակալիս Ձեր ամենայն բարությանց համար, մնամ կատարյալ մեծարանոք անձնանվեր:

Կինս հարգությամբ մեծավ կողջունեմ վսեմությանդ [Ն. Բյուզանդացի]:

Թղթ. № 235 (Բ), վավ. № 247, փաստաթուղթ № 39

7

26 մարտ, 1896

Հույժ ազնիվ և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեր Կ. Եզյանց,

Երեկ ընկալա զ ա և Բ թերթս տպագրյալ Կորյանն, զորս սրբագրեցի և դարձուցի Ձեզ հանձնաբարձալ այսօր:

Ձեռագիրս ԺԾ տետրակին հետ, զոր հղեցի Ձեզ ի 12 նոյեմբերի 1894, հղեցի նաև 43 փոփոխելիս և յավելլիս, և դրեցի վսեմությանդ նույն թվականավ նամակիս մեջ. «Հղեցի Ձեզ այսօր զԺԾ տետրակն, երեսք 559—580, հղեցի նաև ինչ ինչ փոփոխելիս և յավելլիս, խնդրելով ի վսեմութենեդ ներել ինձ զաշխատությունն զոր կհասուցանեմ Ձեզ»: Դարձյալ ի 2 փետրվարի 1895, երբ հղեցի Ձեզ զյառաջաբանս, ներփակած էի նաև փոփոխյալ հատված մի (որ կպատկանի տպագրյալ ա թերթին 15—16 երեսներուն), և դրեցի Վսեմությանդ փետրվար 3-ի նամակավս. «Յառաջաբանիս հետ հղեցի նաև փոփոխելի հատված մի»: Ի 7 հոկտեմբերի 1895 դրեցի էջմիածին առ Կ. Տ. Կոստանյանց, «Հղած էի առ վսեմ Տ. Եզյանց քանի մի փոփոխելիս: Չգիտեմ թե Տ. Եզյանց փոփոխած է զձեռագիրս ինչպես խնդրած էի, թե զայն փոփոխությունս հանձնած է Ձեր խնամոց»: Այս նամակիս պատասխանեց Տ. Կոստանյանց ի 11/23 հոկտեմբերի, բայց հարցմանս պատասխանել մոռացավ: Կրկին դրեցի առ նա ի 17 նոյեմբերի. «Նախորդ թղթիս մեջ խնդրած էի, որ ըսեք ինձ թե Տ. Եզյանց փոփոխած է ուրեք ուրեք զձեռագիրս ըստ իմ սրբագրությանց՝ թե Ձեզ հանձնած է, որ փոփոխեք զայնոսիկ: Խնդրեմ զանց մի ընեք զրել ինձ այս մասիս, զի կարևոր փոփոխելիք էին»: Նույն նոյեմբերի 17-ին դրեցի և առ վսեմությանդ, «Այլևայլ փոփոխելիս հղեցի առ վսեմությանդ. կփափագիմ գիտնալ՝ փոփոխեցիք արդյոք, թե Տ. Կոստանյանցի հանձնեցիք, որպիսզի ինքն փոփոխե»: Վսեմությունդ պատասխանեց նամակիս ի 28 նոյեմբեր (10 դեկտեմբերի), բայց հարցմանս չպատասխանեց, իսկ Տ. Կոստանյանց ոչ երկրորդ նամակիս պատասխանեց, ոչ հարցմանս:

Այժմ իմացա տպագրյալ ա և բ թերթիկներեն, որի 44 սրբագրությանց ե հավելվածոց, զորս հղեցի վսեմությանդ երկու անգամով, և ոչ մին մտեր է ձեռագրիս մեջ: Հետևանքն շատ ծանր է ինձ համար, վսեմական Տեր, և սաստիկ վնասակար զի եթե ձեռագրիս տպվի այնպես որպես է՝ շարաշար պիտի պախարակվեմ ի պարսավագետ քննադատներն իբրև անհոգ մարդ, և գործս պիտի հռչակվի լի շփոթությամբ և խառնակությամբ: Անհրաժեշտ կաբևոր է, որ ես տեսնեմ զվերջին փորձս տպարանին և աս տամ զտպագրացին *cbon à tirir*: Պետք է անմիջապես դադրեցնել տալ զտպագրությունն, որպեսզի կրկին հղեմ առ Ձեզ (կամ էջմիածին), զփոփոխելիս, զյավելլիս և զնջելիս, պետք է նաև կրկին շարել տալ զա և զբ թերթսն (նույնպես զհաջորդ գ-ն և դ՝ եթե արդեն տպագրյալք են), և ինչպես ըսի՝ հղել միշտ առ իս զվերջին փորձսն (թերթի ձևով), զի կան և այլ մանր փոփոխելիք, զորս ևս դյուրավ կրնամ սրբագրել: Վսեմությունդ գիտի թե որչափ ծանր գործ է Կորյունս. ամենայն մատենագիր կփափագի, որ վերջին անգամ աչքն անցունե զյուր գործն, մանավանդ այնպիսի ճղճղած գործ մի՝ որ կպահանջե ամենամեծ ուշադրություն: Կաղաչիմ, կպաղատիմ, որ վսեմությունդ պարտավորե զէջմիածնի տպարանի տեսչությունն, որպեսզի անվրեպ հղեն ինձ զվերջին փորձսն և յիննն ստանան զոր տպագրեսցեն. չգիտեմ ինչ դիտավորություն ունին, որ հանձն չառին կատարել զիմ փափագս: Անտարակույս անախորժ բան է կրկին շարել տալ քանի մի թերթ, բայց շատ ավելի անախորժ է խառնաշփոթ գործ մի հրատարակել, և փոխանակ գովություն՝ պարսավանաց և դատափետության արժանի քլլալ: Գիտցեք, վսեմական Տեր, որ եթե առանց իմ սրբագրության հրատարակվի Կորյունն, բնավ արժեք պիտի չունենա, և ես ուրախության տեղ՝ սաստիկ տրտմությամբ պիտի լցվեմ:

Մեծ Տեր Ծատուրյանց, որ այնպիսի առատաձեռնությամբ 1000 քրունք պարգեզեց նվաստիս և տվավ զծախս տպագրությանն, ապահով եմ, որ սիրով կուտա փոքր ինչ ավելի՝ որպիսի քանի մի թերթն կրկին տպագրվի: Զայս ամեն կհանձնեմ վսեմությանդ իմաստության և բարեսեր հոգածության, և հուսալից եմ, որ վսեմությունդ զամենայն ինչ կբարեհաճի կարգադրել ըստ իմ փափագանաց: Թող քիչ մի ուշանա հրատարակությունն, լավ գործն ոչ երբեք աճապարանք կկատարվի:

Տ. Գյուտ քահանա Աղանյանց խնդրած էր յինն հոգված մի Լումայի Բ թվուն համար: Երեկ հղեցի նմա զյառաջաբանն Փարփեցվո Պատմության, կարգադրյալ. վսեմությունդ պիտի տեսնի թե ո՞րչափ կտարբերի իմ հրատարակությունս Վենետիկո ա և բ տպագիրներեն:

Եթե ընդունած եք զիմ դեկտ. 17-ի հանձնարարյալ նամակն, խնդրեմ ծանուցանեք ինձ, որպեսզի պահանջեմ ի թղթատանն քաղաքիս:

Մաղթելով վսեմությանդ քաջառողջություն մնամ խորին հարգանք անձնանվեր Ձեր [Ն. Բյուզանդացի]:

Հ. Գ. հետ գրելո զնամակիս ստացա այս առավոտ թուղթ ի Տ. Կ. Կոստանյանց, որ կսեթե համարս բացակայության պատճառով շատ ուշ ստացեր է զիմ նոյեմբեր 17-ի թուղթն, բայց դարձյալ կմոռնա նա պատասխանել իմ հարցման թե ձեռագրիս ուրեք ուրեք սրբագրված և փոփոխված է թե ոչ:

Թղթ. № 235 (Բ), վավ. № 248, փաստաթուղթ № 111

Հալոյժ ազնիվ և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեր Կ. Նզյանց,

Ընկալա գՁեր թուղթն անցյալ դեկտեմբեր 30-ի թվականով (հ. տ.) նույն-
պես զիմ զմատենիս ի մեծ Տ. Զինովեկե: Շատ շնորհակալ եմ վսեմությանդ,
որ անմիջապես հանձներ եք էջմիածին զ4 գիրսն զորս խնդրած էի իմ հուն-
վար 7-ի թղթովս, բայց ցայսօր ոչ ինչ ընկալա:

Վսեմությունդ քաջ գիտեմ, որ նավակոծության ժամանակ նավապետն ծով
ընկեց կրնե գլուր պատվականագույն բեռներն: Այսպես ըրած են և Վենետի-
կո Միթիթարյանք. Գարշելի Հասունն այնպիսի մորիկ մի հարուցած է իրենց
դեմ՝ որ խեղճերն խելահեղյալ, միայն գլուրանց անձինս ազատելս ջանացած
են, շինայելով և ոչ ոք: Այդմ մասին շարգահատիմ ես իրենց զի չկարծեմ մո-
ռանալ զարդյունս Չամչյանի, Ավետիքյանի, Ավգերյանի...

Կհարցնեք թե ինչով կզբաղիմ այժմ, և կհիշեցնեք ինձ զթարգմանություն
Յիսուսեան քարոզչաց Տեղեկագրոցն: Ինձ այնպես կերևա, վսեմապատիվ Տեր
և բարեկամ, որ ես ավելի օգտակար կարեմ լինել Ազգին՝ նախնյաց գոնե քա-
նի մի դրվածոց քննադատական բնագրիվ պատրաստելով և մանավանդ
ավարտելով զիմ Նախնիքն՝ ուր 10.000 է ավելի ուղղությունս ցույց պիտի
տամ: Հիսուն և երկու տարեկան եմ այժմ, և հույս չունեմ երկարակեցությունս,
խորհուրդ տվեք ինձ կաղաչեմ նախնյո՞ք զբաղիմ թե թարգմանությամբ:
Այսօր ընկալա ի Վենետիկ քանի մի նոր հրատարակությունս նախնյաց,
տրտմեցա, և ոչ ուրախացա ի շատ տեղիս չեն հասկացած զբնագիրսն, և ուղղել
կարծելով՝ անհնթեթ սխալներ գործեր են: Իմ կարծիքս այն է թե Նախնիքն
պատվական գործ մի պիտի ըլլա ի ձեռս այնոցիկ՝ որ կուսումնասիրեն զմեր
հին գրականությունն, բայց 4—5 տարի անընդհատ աշխատելով հազիվ կհու-
սամ ավարտել զայն:

Մար Աբասա մասին այսչափ միայն կսեմ վսեմությանդ, որ ասորի բնա-
գիրն գտնվի կամ չգտնվի՝ ես բոլորովին աներկբայ եմ թե խորենացի ստեղ-
ծած չէ զՄար Աբաս: Թող Կարիեր դատափետե զխորենացի որչափ, որ ուզե:
Ըստ իս Կարիեր անկարող է խայտառակել զխորենացի:

Կինս և ես կհայտնենք վսեմությանդ զմեր խորին շնորհակալություն Ձեր
բարեմաղթությանց համար, և փոխարեն կմաղթենք Ձեզ ամենայն հաջողու-
թյուն և երջանկություն:

Մնամ լի հարգանք և երախտագիտությամբ վսեմական Տերդ, անձնանվեր՝

Նոցայր

Հուլիս 1-ին և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեհ Կ. Եզյանց,

Ընկալա զՁեր թուղթն փետրվարի 19-ի (հ. տ.): Շնորհակալ եմ վսեմությանդ տված խորհրդին, և ամենայն եռանդամբ կաշխատիմ իմ նախնիք դործույս, որո երեսայրիքն պիտի ըլլա Եզնիկայ Կողրայցվո Բնդդեմ Աղանդոց մատենիկն՝ զոր փուլթ ունիմ ավարտիլ մինչև ցաշուն:

Անշուշտ վսեմությունդ կարգաց զխոստովանութիւնն Յովհաննու կաթողիկոսի, զոր հրատարակին Կարապետ վարդապետ Յովնանու Օձնեցվո կհամարի, բայց չարաչար կսխալի: Եթե Կարապետ վարդապետ ուսումնասիրած ըլլար զՊատմութեան Յովհաննու Դրասխանակերտցվո, անմիջապես կընշակեր թե Դրասխանակերտցին է հեղինակ խոստովանութեանդ, և ոչ Օձնեցին, որո ոճն բնավ նմանութիւն չունի պատմագրին: Ռճույն հետ: Կցավիմ, որ իմ Կորյուն վարդապետս տակաւին չհրատարակեցավ: Կհուսայի, որ այս երկսիրութիւնս կարեւոր գործի մի պիտի ըլլար ի ձեռս բանասիրաց՝ թե ինչպես կարելի է որոշել զայս ինչ մատենագրի լեզուն ի լեզվե այլ մատենագրաց: Եթե էջմիածնի տպարանն դիտավորութիւն չունի հրատարակելո, չուզեր արդոք վսեմությունդ հանձնիլ զայն Տիգրանի հրատարակչական ընկերութեան: Անցյալ սեպտեմբերի 21-ին դրեցի առ Տ. Կ. Կոստանյանց էջմիածին, բայց ցայսօր չընկալա պատասխանի: Վսեմութենեդ կխնդրեմ, որ բարեհաճեք հղել ինձ զՈւսումնասիրութեան խորհրդով Գալուստ Տեհ Մկրտչյանի:— զնորին Վկայաբանութիւն Գորիայ և Շմունի, և Թուղթք Անանիա Տ. Մովսէսի:

Կհուսամ, որ քաջառողջ և հանգիստ եք, վսեմական տեղ և կմաղթիմ ի սրտի, որ միշտ քաջառողջ և հանգիստ ըլլաք:

Մատուցանելով վսեմութեանդ զմեծարանաց ողջույնս ամուսնույս, մնամ երախտապարտ Ձեր [Ն. Բյուզանդացի]:

Թղթ. № 235 (Բ), վավ. № 248, փաստաթուղթ № 213

Հուլիս 1-ին և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեհ Կ. Եզյանց,

Ընկալա զՁեր անցյալ նոյեմբեր 14/26-ի նամակն:

Հղեցի վսեմութեանդ զՄշակ հոկտեմբեր 23, 24, 28, նոյեմբեր 7: Ներեցեք, որ անկարող գտնվեցա հղելու և զնոյեմբեր 12, 26, 27. հոկտեմբեր 25, երկուսն խնդրեցի ի խմբագրութեանն, որ հղե ինձ կրկին օրինակս յայդ չորս թվոց, բայց մինչև ցայսօր չընկալա: Հոգովածներս տակաւին չավարտեցան: Կհիշեմ, որ փափագած էիք Արիստակէս Լաստիվեցեանցվո նոր հրատարակութիւն, զբնագիրն վաղուց պատրաստած եմ, կմնա գրել զժանոթութիւնսն և զառաջաբանն: Եթե կամիք կգրադիմ Լաստիվեցեանցվո, և ետ այնորիկ Կիրակոսի: Կորյուն վարդապետի 19-րդ թերթն կշարվի այժմ, կմնան 15 թերթք: Այժմ կպատրաստեմ նախապետի խառնակութեանցվո տաղֆ սիրո, թվով 13, շատ գեղեցիկ տաղեր են Անակրեոնյան փափուկ իմաստներով և քաջարկատաղաչափութեամբ մին ի տաղիցս հրատարակեալ է ի Հայերգի, երեսք 27—

45, շատ խառնակ, սխալոտ և անիմաստ, այլ երկուք հրատարակյալ են ի Հիսարյանե (1851) և ի Կոստանյանցե (1896, Նոր ժողովածու, պրակ Գ, երես 44—53), ետինս նույնչափ խառնակ և սխալոտ որչափ Հայերգին։ Պիտի խընդրեմ ի վսեմութենեդ զհրատարակություն տաղերուս։

Նոր տարվոյս առթիվ կմաղթիմ վսեմական տեառնդ քաջառողջություն և երկայն շատ տարիներու։ Մատուցանելով և զիմ կնոջս շնորհակալությունս և զհարգանս, մնամ խորին մեծարանոք անձնանվեր Ձեր լնորայր։ Բյուզանդացի]։

Թղթ. № 235 (Բ), վավ. № 249, փաստաթուղթ № 80

11

14 հունիս, 1899

Հույժ ազնիվ և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեռ Կ. Եզյանց,

Երեկ ընկալա զպատասխան թուղթդ մայիսի 29-ին (հ. տ.) և կփութամ պատասխանել։ Անշափ շնորհակալ եմ վսեմությանդ, որ հոգ կկրեք իմ ապագայիս մասին։ Շնորհիվ սիրելի կնոջս՝ նյութական ապրուստս ապահով է, բայց հոգով և սրտով խորտակյալ եմ, և ջղայն հիվանդությամբ կտառապիմ։ Արվեստանոցն պիտի փակեմ թե ոչ քանի մի օրեն պիտի որոշեմ, վարձեցի բնակարան մի տարվոյս հուլիսի 1-են մինչև ի 30 սեպտեմբերի 1900։ Սխալ գրած եմ 1890-ի նամակիս։ Սիրելվոյս մահվամբ Ստոքհոլմ շկորոյս ինձ համար զյուր հրապույրքն, քանզի սիրելվոյս գերեզմանն ի Ստոքհոլմ է, և ես պիտի թաղվեմ նորա քով։ Եթե գրական աշխատությունքս չկարենան զբաղեցնել զիս և մխիթարել փոքր ի շատե, աշխարհիս ամենաթշվառ մարդն պիտի ըլլամ։ Աստված ողորմի ինձ։

Իմ փափագս է առանձնանալ կամ ի Վենետիկ կամ ի Վիննաչի։ Վանս, պայմանավ, որ մարմինս փոխադրվի գերեզմանոց Ստոքհոլմի՝ սիրելվոյս քով։ Բայց Մխիթարյանք պիտի ընդունին զիս՝ չեմ համարձակիր հուսալ։

Եթե հաջողած ըլլայի 10.000 փրանկի վաճառել զիմ Բառագիրս, թերեւ ողջ էր այսօր իմ սիրելիս, աշխատություն սպանեց զհեք ամուսինս։

Ավելի երկար գրելու կարողություն չունիմ, խնդրեմ ներք ինձ։

Հղեցի Ձեզ այսօր հանձնարարյալ զ Մ. Կաղանկատվացի, տպ. էմին, զոր վերստին տված էիք ինձ ազնվաբար։ Այլ ինչ չունիմ առ Ձեզ վերադարձնելի, բայց մինչև ցետին շունչ կենացս երախտապարտ պիտի մնամ Ձեզ այս ամենայն բարությանց համար, որովք օգնեցիք ինձ և քաջալերեցիք զիս։

Անցյալ օր հղեցի առ Տ. Գյուտ զառաջարան Կորյան, որով լրացած է ձեռագիրս։

Խորին շնորհակալանոք և մեծարանոք մնամ վսեմությանդ անձնանվեր։

Ն[որայր]

Թղթ. № 235 (Բ), վավ. № 249, փաստաթուղթ № 140.

12

26 սեպտեմբեր, 1900

Հույժ ազնիվ և սիրելի բարեկամ

Վսեմապատիվ Տեռ Կ. Եզյանց,

Ընկալա զՁեր պատվական թուղթն ամսոյս 5/18-ին թվականավ, հանդերձ ներփակյալ նամակովն վեհափառ կաթողիկոսին՝ որով կհրավիրե զիս

էջմիածին ըստանձնել զգործ վերակացության հայերեն Աստվածաշնչի տպագրության:

Վաղուց ջերմ փափագ ունեի, ինչպես գիտեք, երթալո յէջմիածին և ուսումնասիրելո զհայ Ձեռագիրս բազմահարուստ Մատենադարանին: Որչափ փափագս ջերմ էր՝ նույնչափ և առողջութիւնս զորավոր, աշխատութիւնս մեծ, բայց սիրելիւյս ողորմ մահվամբն չեմ այժմ ինչ որ էի քանի մի տարի առաջ, սուգ և տրտմութիւն սաստիկ խանգարած են զիմ առողջութիւն, ջղացությամբ և զխացավությամբ կտառապիմ, և անհնար է որ այժմու կիսակենդան վիճակիս մեջ՝ հեռավոր ուղեգնացութիւն ձեռնարկեմ, կլիմա փոխեմ և նոր կյանք սկսեմ: Բժշկիս պատվերն էր, որ թե՛ անցյալ ամառ և թե՛ այս ամառ օտար երկիր երթայի ի դարման առողջութիւնս և ի սփոփանս սգավոր սրտիս, շարժեցա ի Ստոքհոլմ, քանզի սիրելիւյս դրամագլխոյն տոկոսիքն, որովք զիմ պետս կհոգամ՝ բավական չէին արտաքու կարգի ծախուց, արդեն 5000 քրունա (—2500 ռուբլի) ծախսած է այդ դրամագլխո, և ես չկարացի յետ ստանալ զգումարդ ո՛չ վաճառմամբ արվեստանոցին, ո՛չ վաճառմամբ 1000 օրինակաց բառարանիս, և տրտմութիւն ի տրտմութիւն վրա կրեցի:

Ես այժմիկ, վսեմական Տեր և բարեկամ, սիրելիւյս ուզած կահկարասեռքն բնակարան մի յարդարած եմ ուր կապրիմ մենավորիկ, միակ ընկերակից ունելով զաղախինս, որ կպատրաստե զիմ անպաճույճ կերակուրն և կխնամեմ զիս անձնանվիրաբար: Զունիմ բարեկամս և սիրելիս, որ գան մխիթարել զիս, չեմ մասնակցիր որեւէ հանդեսի կամ ուրախութիւն, բայց այն լուծութիւն և հանդարտութիւն, որում կապրիմ ըստ կարի զբաղելով ուսմամբ, ազատ կպահեմ զիս ամենայն սրտնեղութենե, և սրտնեղութիւնք անտանելի են ինձ: Արդ՝ թողու զիմ խաղաղիկ բնակարանն և շորս հինգ սնդուկներու բռնեռով երթալ այնպիսի հեռավոր տեղի որպիսի է էջմիածին՝ մեծ քաջութիւն կպահանջե յինեմ: Իրավ է, որ հոգեւոր Տերն կսե յուր նամակին, «Ոչ ինչ ըստ նյութականին մի՛ հոգար, անձնտիրութիւն համար երբեք մի՛ մտածիր, Հայրիկ պատրաստ է տնօրինել ձեզ համար ինչ որ պիտո է, դուք լիովին կստանաք ձեր տքնութիւն վարձք»: Սակայն եթե հիվանդանամ, եթե չգտնեմ էջմիածին զիմ Ստոքհոլմի հանդարտութիւն և խաղաղութիւն:

Հրեապետ, որ շնորհիւ և ողորմությամբ Տեառն կանգնիմ վերջապես ի կործանմանես և կազդուրիմ, էջմիածին ուղևորութիւնս կմնա գալ տարվո, 1901-ին, հուլիսի կամ օգոստոսի: Կահկարասիքս, օտար լեզվով գրչանքս, և հայերենքն՝ որոց անմեղական պետք չունիմ, կմնա ի Ստոքհոլմ՝ հատկապես վարձյալ սենյակի մեջ, հետս կառնում միայն զիմ զգեստեղենս, նախնյաց մատենագրութիւնս և զիմ ձեռագիր երկասիրութիւնս: Պայմանագիր կստորագրեմ մի տարի մնալո էջմիածին և պաքապելո հրատարակութիւն Աստվածաշնչին, ի կատարած տարվոյն, եթե հիվանդութիւն կամ վատառողջութիւն չարգելուն զիս, կնորոգեմ պայմանագիրս՝ նույնպես մի տարվո համար, և այսպես հաջորդաբար: Առողջութիւնս վիճակեն կախում ունի մնալ էջմիածին ցավարտումն տպագրութիւն Աստվածաշնչին, յետ այնօրիկ կդառնամ ի Ստոքհոլմ ուր կփափագիմ անցնել զիմ վերջին օրերն, մեռնիլ, և թաղվիլ ի շիրմի սիրելիւյս: Եթե օրհասս ժամանե հանկարծակի էջմիածին, կուզեմ, որ իմ ծախուք փոխադրվի մարմինս ի Ստոքհոլմ:

Վարձատրութեանս մասին՝ այսչափ կսեմ, որ կփափագիմ զայն առատ: Կփափագիմ, որ ճանապարհի ծախքս ի Ստոքհոլմի էջմիածին և էջմիածնի ի Ստոքհոլմ՝ կանխիկ հատուցվի: Տարեկան արձակուրդիս ժամանակ եթե էջմիածնի ուղևորիմ ի Ստոքհոլմ կամ այլուր, յայտ է թե երթի և դարձի ծախքն իմ վերա է: Կփափագիմ, որ ինձ հրամանատու՝ միայն Հոգևոր Տերն ըլլա:

Բառարաններու 26 արկղերն արվեստանոցն փոխադրեցի յայժմու բնակարանս, հատուցանելով 40 քրունա: Երբ ուղևորիմ էջմիածին, հարկ պիտի ըլլա ուրիշ սենյակ վարձել կահկարասյացս համար: Իսկ բառարաններս: Դարձյալ կաղաչիմ, կպաղատիմ, վսեմապատիվ Տեր և բարեկամ, աղատեցեք զիս ի հոգոց բառարանիս և հաճեցեք հայթայթել ինձ զխնդրած գումարս: Եթե վսեմութունդ զայս մեծ բարիս ընե ամենաթշվառիս, չեմ մոռանար ի կտակիս զիմ սիրելի Ազգն, և այն՝ փոխարեն բարյացն զոր գտած եմ ի Ձենդ, զի Դուք միայն իմ ժամանակցաց քաջալերեցիք զիս բանիվ և արդյամբք:

Կբաղձայի հայ կազմատան մեջ կազմել տալ երկու օրինակս իմ Կորյուն վարդապետի, և հղել առ վսեմութունդ և առ Տ. Մատուրյանց: Բաղձանքս չի-րագործվեցավ, բայց եթե հաճո է Ձեդ կազմել կուտամ աստ ի Ստոքհոլմ և զերկուսն ևս կհղիմ առ վսեմությանդ, զի Տեր Մատուրյանցի այժմու հասցեն անծանոթ է ինձ:

Երկու երեք օրեն պիտի գրեմ առ վսեմափառն, ծանուցանելով, որ ի բանակցութեան եմ ընդ վսեմապատիվ Տեառնդ:

Խնդրելով ի Տեառնե, որ պահե զՁեզ ողջ և առողջ ընդ երկար ամս, մնամ խորին մեծարանք վսեմութեանդ միշտ երախտապարտ Ն. [որայր],

Շնորհակալ եմ Կորյան օրինակներուն զորս ստացա:

Բղթ. № 235 (Բ), վավ. № 250, փաստաթուղթ № 10

ПИСЬМА НОРАЙРА БЮЗАНДАЦИ КАРАПЕТУ ЕЗЯНУ

А. Г. АДАМЯН

Р е з ю м е

Письма известного арменоведа Н. Бюзандаци составляют неотъемлемую часть его научного наследия. Публикуемые письма, адресованные К. Езяну, и поныне представляют определенный научный интерес: во-первых, они затрагивают целый ряд вопросов по арменоведению, во-вторых, сообщают интересные сведения о жизни и деятельности ученого.